ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՐՈՆ

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

Ավատատիրական հարաբերություններն Աղվանքում ձևավորվել են IV դ.: Ճիշտ այս ժամանակաշրջանին են վերաբերում բացառապես վաղ միջնադարյան հայկական աղբյուրներում հանդիպող այն սակավ տվյալները, որոնք մատնանշում են նման հարաբերությունների առկայությունն Աղվանքում: Այստեղ դրանց գոյության փասան առաջին անգամ արձանագրված է Աղվանքի արքա Ուռնայրի ճառում՝ ուղղված իր զինվորներին Ձիրավի ճակատամարտից (371 թ.) առաջ: «Յանձն լիցի ձեզ,– պատվիրում է նա իր զինվորներին,– յիշելով ի ժամանակի իբրև ձերբակալ արասցուք զզօրսն Յունաց, զբազումս ի նոցանէն ասլրեցուսջիք, զի կալեալս կապեալս տարցուք յաղթանս[1] ի գործն կաւագործութեան, գաղատոս որմաչէնս պիտոյից մերոց քաղաքաց ապարանից և այլոց պիտոյից»[2]: Ինչպես իրավացիորեն նկատվել է պատմագրության մեջ, Ուռնայրի այս ճառի մեջ խոսքը գերիներին թագավորական ու նախարարական տիրույթներում բնակեցնելու և նրանց աշխատանքային ուժն այնտեղ օգտագործելու մասին է[3]: Ուրեմն, իր զինվորներին հրահանգավորելիս, Ուռնայրը ելել է Աղվանքում գործող այնպիսի հասարակարգի առկայությունից, որին հատուկ է հասարակության բաժանվածությունը սոցիալական առանձին խմբերի և հիմնված է հողի մասնավոր սեփականատիրական իրավունքի վրա: Իսկ այդպիսին ավատատիրականն էր, քանի որ դրան են բնորոշ նշված տարրերը:

Հայաստանին հարևան այս աշխարհում հասարակության սոցիալական բաժանվածություն է մատնանշում նաև Եղիշեն: Գրելով, որ Հայաստանում ռազմագնդերը կազմավորվում են ազատներից, ազատորդիներից ու ոստանիկներից, նա ավելացնում է, որ Աղվանքում և Վիրքում ևս զորագնդերը նույն ձևով էին կազմավորվում[4], ինչը մեր վերն ասածի ապացույցն է: Մեզ հետաքրքրող երկրում, ավատատիրական հարաբերություններին հատուկ հասարակության շերտավորումը «ավագների» ու «կրտսերների» ցույց է տալիս Ղ. Փարպեցին պարսից արքա Հազկերտ II-ին (438–

---

[1] *Ստ. Մալխասյանցը, ելնելով ձեռագրերից մեկի տարընթերցումից, կարդում է «յԱղուանս» և դա ճիշտ է [տե՛ս Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև Բ ո ւ զ ա ն դ). Երևան 1987, էջ 439, ծանոթ. 168]:*

[2] *Բ ո ւ զ ա ն դ, էջ 296:*

[3] А. П. Н о в о с е л ь ц е в, В. Т. П а ш у т о, Л. В. Ч е р е п н и н. Пути развития феодализма. М., 1972, с. 181.

[4] *Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1989, էջ 20:*

457 թթ) Վարդան Մամիկոնյանի տված պատասխանով. «Բազումք են յայս երից աշխարհաց, յազատորերոյ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրբք և շատ են որ ի խոնարհ են»[5]: Աղվանքում, նշված ժամանակաշրջանում, նույնպիսի հարաբերությունների գոյությունն են ցուցում ուրիշ հայ պատմիչներ ևս, որոնք երկրի հասարակական կարգը, սոցիալական տարբեր խավերն ու սեփականության զանազան տեսակները նշելու համար օգտագործում են «թագաւոր» «նախարար», «նահապէտ», «ազատ», «չինական», «տանուտէր», «երդ», «ազգ», «ազդապէտ», «եկն-եկվոր», «կալուածք», «վիճակք», «սեպհական» և ավատատիրական հարաբերություններին հատուկ շատ այլ տերմիններ:

Հնագիտական պեղումներն, իրենց հերթին, գալիս են ապացուցելու արտադրության ավատատիրական եղանակի գոյությունն Աղվանքում: Դրանք լույս աշխարհ են հանել դյուղատնտեսական գործիքներ ու տնային գործածության իրեր, որոնք կատարելագործվածությամբ ու մշակման տեխնիկայով տարբերվում են նախորդ շրջանի իրենց նմանակներից՝ և ակնհայտորեն ընդգծում են տնտեսական այն լուրջ տեղաշարժերը, որոնք տեղի էին ունեցել մինչ այդ տիրող արտադրական հարաբերություններում և պայմանավորել էին հին տնտեսակարգի ճգնաժամն ու նորի հաղթանակը:

Այսպիսով, IV դարում Աղվանքը թևակոխել էր իր զարգացման ավատատիրական փուլը, վերջինիս առանձնահատկություններով: Ինչպես հատուկ է ավատատիրական հարաբերություններին, Աղվանքում էլ հասարակությունը բաժանված էր երկու հիմնական, միմյանց ներհակ դասակարգերի՝ ավատատերերի, որոնք ընդհանուր առմամբ կազմում էին «ազատների» դասը և կախյալ ու ազատ գյուղացիների, որոնց սոցիալական կարգավիճակն արտահայտվում էր «անազատ» և սրան հավասարազոր «չինական» և «ռամիկ» տերմիններով: Տիրելով արտադրության հիմնական միջոցին՝ հողին, ավատատերերը իրենցից կախման մեջ դրեցին նյութական բարիքների անմիջական արտադրողներին՝ գյուղացիներին և ամեն կերպ ձգտում էին պահպանել իրենց գերիշխանությունը: Դրա համար նրանք օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները և, առաջին հերթին, տնտեսական ու արտատնտեսական լծակներ: Սակայն տնտեսական հարկադրանքը գեռևս բավարար չէր ավատատերերի գերիշխանության լիակատար ապահովման համար: Հարկավոր էր նույնը ամրապնդել նաև գաղափարապես: Առաջանում է մի այնպիսի գաղափարախոսության պահանջ, որն իրավական տեսակետից նույնպես «անազատներին» անարգել շահագործելու լայն հնարավորություն ընձեռեր և ավելին՝ արդարացներ

---

[5] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան. Երևան, 1982, էջ 111–113:

[6] И. М. Джафарзаде. Археологические разведки на Апшероне.— "Известия" АН АзССР, 1948, N 6, с. 81—94; С. М. Казиев. Археологические памятники Мингечаура как исторические памятники для изучения истории Азербаджана.— "Известия" АН АзССР, 1950, N 7, с. 167—180; О. Ш. Исмизаде. Ялойлутепинская культура. Баку, 1956; Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе. Древний Мингечаур. Баку, 1959.

այն: Այդպիսին Աղվանից իշխող վերնախավի համար եղավ քրիստոնեությունը և նա շտապեց կյանքի կոչել այն:

Նոր ժամանակներ էին սկսվել նաև Աղվանքի քաղաքական կյանքում: IV դ. 30-ական թվականներին, ի դեմս Վաչագան I Քաջի, թագավորության գլուխ էր անցել Արշակունյաց հարստությունը[7] և պետության ու նորահաստատ արքայատոհմի դիրքերն ամրապնդելու եռանդուն ջանքեր էր գործադրում: Ամուր դիրք ու կենտրոնացված պետություն ունենալուն ուղղված Արշակունիների գործունեությունը պահանջում էր նաև համապատասխան դաղափարական հիմնավորում: Դա կարող էր անել քրիստոնեությունը հպատակներին հնազանդության կոչ անելու իր պատվիրաններով: Ուստի , շահագրգիռ խավը չէր կարող չնկատել քրիստոնեության դերը պետական կարևորություն ներկայացնող այս գործում և նրան պաշտոնական բնույթ չհաղորդեր:

Երկրի հոգևոր կյանքում նույնպես ի հայտ են դալիս նոր երևույթներ: Զարգանում է հասարակական միտքը: Քրիստոնեությունը, որի մասին առաջին պատկերացումները կազմվել էին II դ. սկզբներին Թադեոս առաքյալի աշակերտ Սր. Եղիշայի միջոցով և ձև ու բովանդակություն ստացել Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Մանուկ Գրիգորիսի գործունեությամբ[8], անցնելով երկար ու դժվարին ուղի, ուսումնասիրվող ժամանակաշրջանում արդեն իր տեղն ուներ հասարակության գիտակցության մեջ, գնալով ամրապնդվում էր և, հանդես դալով որպես աղքատների ու զրկվածների կրոն, ժողովրդական նորանոր զանգվածներ ընդգրկում վերջիններիս համար դառնալով հոգևոր բավարարման միջոց: Երկրում առաջացել և հաջողությամբ գործում էին քրիստոնեական համայնքներ և, ամենայն հավանականությամբ, նաև կրոնական հաստատություններ:

Այսպիսով, քրիստոնեությունը թափանցել էր Աղվանքի հասարակական կյանքի բոլոր ոլորտները և յուրաքանչյուր խավի համար ստացել յուրովի կարևորություն: Հասունացել էր այն պետական պաշտոնական կրոն հռչակելու ժամանակը: Դրա համար առկա էին տնտեսական, քաղաքական և հոգևոր անհրաժեշտ նախադրյալները, որոնք ուժ էին ստանում նաև այնպիսի արտաքին կրոնաբարոյական գործոնի ազդեցությամբ, ինչպիսին քրիստոնեության վաղուց արդեն պետական կրոն լինելն էր հարևան Մեծ Հայքում և Վիրքում: Եվ աչքի առաջ ունենալով քրիստոնեություն ընդունած հայերի օրինակը, առաջինը Աղվանքի Ուռնայր արքան է ճիշտ ըմբռնում նոր կրոնի նշանակությունը երկրի կյանքում և հանգում տյն ընդունելու գաղափարին: Մ. Կաղանկատվացին բերում է հայոց Գյուտ Արահեղացի կաթողիկոսի (461–478 թթ.) նամակն ուղղված Աղվանքի թագավոր Վաչեին, որտեղ պարզեիպարզ ասված է այդ մասին: «Յառաջադույին սէրն Քրիստոսի բնա-

---

[7] Հ. Սվազյան. Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, N 3, էջ 158–170:

[8] Հ. Սվազյան. Սր. Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Զողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ.– «Լրաբեր հաս. գիտությունների», 2000, N 2, էջ 55–65: Նույնի՝ Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը.– «Պատմա-բանասիրական հանդես», 2002, N 2, էջ 131–141:

կեաց ի նախնեւոյն ձերում Ուռնայրի,– գրում է հայոց կաթողիկոսը Աղվանից արքային և մանրամասնում,– նախանձ երկնաւոր եբեր ընդ Տրդատայ Հայոց արքային, իբրև լուաւ զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, որ ի ձեռն սրբոյն Գրիգորի նշանք և արուեստք գործեցան յաշխարհին Հայոց, վալվաղակի դառնալ սոցա ի բազումս շաւղաց մոլար ճանապարհին առ մի ճշմարիտն Աստուած»[9]:

Ուռնայր արքան շտապում է Հայաստան մեծ շքախմբով, նախարարների բազմությամբ ու զորքով (անշուշտ թիկնազորով), ներկայանում հայոց թագավորին ու կաթողիկոսին (Մ. Կաղանկատվացու և Կ. Գանձակեցու ասելով՝ Տրդատին և Գրիգոր Լուսավորչին[10], որը, ինչպես կտեսնենք, ճիշտ չէ): Այստեղ նա քառասունօրյա պահքով և աղոթքներով ձերբազատվում է հեթանոսական մոլորություններից, խորամուխ լինում քրիստոնեական ուսմունքի խորհուրդների մեջ, ու հիսուներորդ օրը մկրտվում-ձերբազատվում է հեթանոսական մոլորություններից[11] և վերադառնում իր երկիրը: Նրա հետ հայոց թագավորը մարդիկ է ուղարկում, որոնք պետք է որ օգնեին նրան Աղվանքում քրիստոնեության ամրապնդման գործում[12]: Վերադառնալով Աղվանք, նորադավան թագավորը սկսում է նախապատրաստական աշխատանքներ տանել նոր կրոնին պաշտոնական բնույթ տալու համար: «Եկն Ուռնայր արքան,– գրում է Մ. Կաղանկատվացին,– եմուտ յաշխարհդ Աղուանից ուսոից և կատարեաց զնոսա առաքելական կանոնօք»[13]: Նման ձեռնարկումներով կայուն հիմք ստեղծելով, Ուռնայրը քրիստոնեությունն Աղվանքում հռչակում է պետական պաշտոնական կրոն[14]:

Ընդունելով հանդերձ, որ Ուռնայրն էր աղվանացիների դարձի հոդևոր հայրը, ուսումնասիրողները՝, սակայն, միակարծիք չեն ո՛չ նրա գահակալության տարիների և ո՛չ էլ Աղվանքում քրիստոնեության ընդունման տարեթվի մասին: Պատմիչների հաղորդումների համաձայն, Աղվանից այս թագավորը Հունաց Կոստանդիանոս կայսեր (306-337 թթ.), Հայոց Տրդատ III Մեծ թագավորի (298–330 թթ.) և Գրիգոր Լուսավորչի (252–325 թթ., կաթողիկոս էր 301–325 թթ.) ժամանակակիցն էր, իսկ քրիստոնեությունն էլ այս երեք երկրներում հաղթանակել էր միաժամանակ («Եւ այսք ի միում ժամանակի եղեն հրաշք յաստուածուստ»[16]): Հիմք ընդունելով պատմիչների հաղորդումները, ուսումնասիրողները գտնում են, որ Ուռնայրը Աղվանքում գահակալել է IV դ. սկզբնե-

---

[9] Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատվացի). Երևան, 1983, էջ 18:

[10] Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց (այսուհետև՝ Գ ա ն ձ ա կ ե ց ի). Երևան 1961, էջ 193:

[11] Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 19-20:

[12] Նույն տեղում, Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 193:

[13] Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 20:

[14] «Այց արար Աստուած ազգի մարդկան՝ ընդհանուր ծաղկեցոյց զարևմտեայ կոյս մեծ կայսերքն Կոստանդիանոսիւ, լուսաւորեաց զՄեծ Հայս երանելեաւն Տրդատաւ: Ած ի հաւատս և զելս, արեգականն, որ սակաւ ինչ ծանուցեալ էին զծագումն փրկութեան ճշմարիտ արեգականն: Կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի գերագոյն լուսաւորեցան» (Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 14):

[15] Բացառություն է կազմում Ա. Հակոբյանը, որի մասին կխոսվի ստորև:

[16] Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 14, Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 193:

րին: Ք. Պատկանյանն, օրինակ, ցույց է տալիս նշված դարի 1-ին քառորդը[17], իսկ Մ. Բարխուտարյանցը նույնիսկ ստույգ տարեթիվ է նշում. «Ուռնայր գահակալած է երևում Տրդատի հաճութեամբ, մօտաւորապէս Փրկչական 300–301 թուականին»[18]: Ֆ. Մամեդովան նրա թագավորության տարիներ է համարում 313–371 թթ.[19]:

Ուռնայրին դիտելով IV դ. սկզբների գահակալ, ուսումնասիրողները նրա անվան հետ կապված պատմական հայտնի շրջադարձի ժամանակաշրջանը, բնականաբար, որոշելու էին նրա թագավորած տարիների շրջանակում: Այսպես, Մ. Բարխուտարյանցը, ճիշտ է, որևէ տարեթիվ չի նշում, բայց Աղվանքում դավանափոխության ողջ պատմությունը ներկայացնում է իբրև հիշյալ ժամանակների դեպքեր[20], Ֆ. Մամեդովան արդեն ցույց է տալիս ստույգ թվական՝ 313[21], իսկ ըստ Ռ. Գեյուշևի նույն իրադարձությունը տեղի է ունեցել Գրիգոր Լուսավորչի կենդանության օրոք մինչև 326 թ.[22]:

Աղվանքում քրիստոնեության ընդունման տարի Ա. Հակոբյանը համարում է 315 թ.: Գրա համար նա ելակետ է ընտրել Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հունարեն խմբագրության (Սբ. Գրիգորի Վարքի) այն տեղեկությունը, որի համաձայն Գրիգոր Լուսավորիչը Աղվանք է ուղարկել Թովմաս անունով մեկին[23]: Վերջինիս կարգելով Աղվանքի առաջին եպիսկոպոս և գանելով, որ Թովմասը Աղվանք է ուղարկվել Լուսավորչի՝ Կեսարիայից 314 թ. վերադառնալուց հետո հաջորդ տարում, եզրակացնում է, որ 315 թ. էլ քրիստոնեությունն Աղվանքում ճանաչվել է որպես պետական կրոն, ընդ որում ոչ թե Ուռնայրի, այլ անունով անհայտ մի ուրիշ թագավորի կողմից[24]:

Միանգամից ասենք, որ առաջարկված և ոչ մի տարեթիվ, որպես Աղվանքում տեղի ունեցած շրջադարձային իրադարձության թվական, իրական չենք համարում: Մասնավորապես ճիշտ չէ դրա համար հիմք ընդունել Սբ. Գրիգորի Վարքից քաղված տեղեկությունը, քանի որ նրանում սոսկ ասվում է, թե Գրիգոր Լուսավորիչը Թովմաս անունով մի անձնավորության է ուղարկել Աղվանք: Իսկ նման հիմքից բոլորովին էլ չի հետևում, թե նա Աղվանք է ուղարկվել իբրև եպիսկոպոս, որ համարվի առաջինը երկրում: Եվ դա այն դեպքում, երբ մյուս հայկական աղբյուրները, որոշակիորեն, հատուկ չեշտելով

---

[17] К. Патканян. История агван Моисея Каганкатваци, писателя X в. СПб., 1861, с. 305.

[18] Մ. Բարխուտարեան ց. Պատմութիւն Աղուանից. Հ. Ա., Վաղարշապատ, 1902, էջ 55:

[19] Ф. Мамедова. Политическая история и историческая география Кавказской Албании. Баку, 1986, с. 186.

[20] Մ. Բարխուտարեան ց. Նշվ. աշխ., էջ 56–58:

[21] Ф. Мамедова. Նշվ, աշխ., էջ 186, 228:

[22] Р. Б. Геушев. Христианство в Кавказской Албании. Баку, 1984, с. 29.

[23] G. Garitte. Documents pour L'etude du livre d'Aganthange. Citta del Vaticano, 1946, p. 101-102.

[24] А. Акопян. Албания — Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 125—126.

կրոնական աստիճանը, Աղվանքի եպիսկոպոս և, նույնիսկ, կաթողիկոս, առաջինը նշում են Մանուկ Գրիգորիսի անունը:

Դատելով Գրիգոր Լուսավորչի գործունեությունից, որ քրիստոնեություն տարածելու նպատակով քարոզիչներ էր առաքում հարևան երկրներ, կարելի է վստահորեն ասել, որ սույն Թովմասն Աղվանք է գնացել քարոզչական աշխատանքներ տանելու: Դա հաստատվում է նույն հաղորդման հաջորդ տողերով, ուր գրված է, որ հայոց հայրապետը միաժամանակ մարդիկ է ուղարկել Վիրք (Իբենարքոսին) և Լազերի երկիր (Սոփրոնիոսին)[25], որտեղից պարզից էլ պարզ երևում է, որ վերջիններս (նրանց հետ և Թովմասը) ընդամենը քարոզիչներ էին, և Գրիգոր Լուսավորչի հանձնարարությամբ ուղարկվել էին տարբեր երկրներ: Իզուր չէ, որ ոչ մի հետազոտող սրանից այնպիսի հետևություն չի արել, թե հիշյալ երկրներում քրիստոնեությունը այս վաստով հռչակվել է պետական կրոն:

Այսպիսով, Թովմասը քարոզիչ էր և գործում էր Աղվանքում մինչև այստեղ քրիստոնեության ընդունումը: Հակառակ պարագայում «Վարքի» հեղինակը ավելի շուտ կնշեր, այն էլ անվանապես, թագավորին (որպես կարևոր այդ իրադարձության գլխավոր դեմքի, և դա բնական կլիներ), քան ոմն Թովմասի, ընդսմին նրան պարուրելով անորոշության շղարշով: Այնպես որ, եթե նույնիսկ ընդունելու լինենք, թե Թովմասը իսկապես Աղվանք է ուղարկվել Լուսավորչի 314 թ.[26] Կեսարիայից վերադառնալուց հետո հաջորդ տարում՝ 315 թ., գարձյալ ճիշտ չի լինի վերջին թվականը դիտել որպես Աղվանքում քրիստոնեության ընդունման տարեթիվ:

Ինչ վերաբերում էր հարցի առնչությամբ արտահայտված մյուս տեսակետներին, ապա կարելի էր հավատալ թե՛ պատմիչին և թե՛ նրա տեղեկության վրա հեցող ուսումնասիրողներին, եթե մյուս հայ պատմիչները՝ Մ. Խորենացին, Փ. Բուզանդն ու նաև ինքը՝ Մ. Կաղանկատվացին չհիշատակեին նույն Ուռնայրին, որպես Պապ թագավորի (370–374 թթ.) ժամանակակիցն ու Շապուհ II պարսից արքայի դինակիցը Զիրավի հայանի ճակատամարտում (371)[27], որով սարսափեն երկարում է նրա թագավորության շրջանը: Ստացվում է այնպես, որ դեռևս դարասկզբին թագավորելու տարիք ունեցող այս Ուռնայրը նույն դարի 70-ական թվականներին այնքան կորովի էր, որ նույնիսկ պատերազմների էր մասնակցում: Չնայած դրա անհնարինությանը, Ֆ. Մամեդովան հավատում է գրան, օրինակ բերելով Շապուհ երկարակյացի թագավորության տևական ժամանակամիջոցը[28]: Բայց ուսումնասիրողն անտեսում է այն պարագան, որ Շապուհ II-ի գահակալության երկարատևությունը գեռ օրորոցից թագավոր հռչակվելու հետևանք էր և

---

[25] G. G a r i t t e. Նշվ. աշխ., էջ 102-104, 127:

[26] Տարեթվի մասին տե՛ս Պ. Ա ն ա ն յ ա ն. Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռնագրություեան թուականը և պարագաները. Վենետիկ, 1960, էջ 146–170, որն էլ, որպես ճշգրտված թվական, ընդունել է Ա. Հակոբյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 126 ծան. 7):

[27] Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1991, էջ 304, Բ ու զ ա ն դ, էջ 294–296, Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 30–31:

[28] Ф. М а м е д о в а. Նշվ, աշխ., էջ 261, ծանոթ. 48:

չի արտացոլում նրա կառավարման ինքնուրույն շրջանը, քանի որ մինչև հասունանալը և անձամբ թագավորելը երկրում իշխում էր մայրը[29]: Մինչդեռ Ուռնայրը Տրդատի ու Կոստանդիանոսի օրոք ինքը պետք է կանգնած լիներ պետության ղեկին, որ փոխհարաբերությունների մեջ մտներ նրանց հետ: Ձիրավի ճակատամարտում կռվող Ուռնայր արքան IV դ. սկզբներին ոչ միայն նման փոխհարաբերությունների մեջ մտնելու տարիքի չէր, այլև թագավոր էլ չէր: Ուսումնասիրությունները պարզել են, որ Ուռնայրի ենթադրյալ թագավորության շրջանում 30-ականներից մինչև 50-ականների վերջը, Աղվանքում միմյանց հաջորդելով թագավորել են Վաչագան I Քաջը և Վաչե I-ը, որոնց պատմականությունն ապացուցվել և թագավորության ժամանակաշրջանը ճշտվել են նույն տարիներին տեղի ունեցած պատմական անցուդարձերով[30]:

Այսպիսով, միանգամայն սխալ է Ուռնայրի դահակալումը հաշվել դարասկզբից և այդ սխալ հիմքով որոշել Աղվանքում քրիստոնեության ընդունման ժամանակը:

Նկատի ունենալով, որ Վաչագան I-ի և Վաչե I-ի թագավորության շրջանը հասնում էր մինչև IV դ. 50-ական թվականների վերջերը, իսկ 371 թ. Ձիրավի ճակաամարտում Ուռնայրը հիշատակվում է արդեն թագավոր, կարելի է մակաբերել, որ վերջինս Աղվանքում գահ է բարձրացել մինչև 70-ական թվականները, շուրջ 60-ականների սկզբներին և ոչ մի դեպքում ղրանից շուտ: Այլ խոսքով՝ Աղվանից այս թագավորը հայոց Արշակ II (350–368) և Պապ (370–374) թագավորների ժամանակակիցն էր[31], և ոչ թե Տրդատ III-ի և Կոստանդիանոսի, որ, ելնելով Մ. Կաղանկատվացու հաղորդումից, սխալմամբ կարծել են ուսումնասիրողները[32]:

---

[29] Е. К р ы м ц к и й. История Сасанидов. М., 1904, с. 37.

[30] Г. С. С в а з я н. История страны Алуанк (с древнейших времен по VIII в.) Автореф. дис. на соискание ученой степени доктора ист. наук, Ереван, 1991, с. 29–30. Կաղանկատվացին էլ Աղվանքի թագավորների իր ցանկում Ուռնայրին հիշատակում է Վաչագան I Քաջից և Վաչե I-ից հետո (տե՛ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 41):

[31] Այստեղ ճիշտ է Ա. Հակոբյանը, որը Ուռնայրին համարում է Պապի ժամանակակիցը (տե՛ս А. А к о п я н. Նշվ. աշխ., էջ 127):

[32] Կան ուսումնասիրողներ, որոնք նկատել են, որ Ուռնայրի մասին Կաղանկատվացու հաղորդումներից առաջանում է մեկ թագավորի համար գահակալության անօրինակ երկար շրջան և փորձելով հարթել այդ անհամապատասխանությունը, Ուռնայր անունով երկու թագավոր են ենթադրել, որոնցից մեկը իբրև թե կառավարել է IV դ. 30-ական թվականներին, մյուսը՝ նույն դարի 70-ական (տե՛ս Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Դ, Երևան 1948, էջ 204: Ն. Ա կ ի ն յ ա ն. Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր պատմությունն Աղվանից. Վենետիկ, 1970, էջ 61): Գրելով, որ Աղվանքում գահակալել է Ուռնայր անունով կա՛մ երկու թագավոր, կա՛մ մեկը՝ 60–70-ական թվականներին, բայց և գտնելով, որ աղբյուրների հաղորդումները՝ կապված Ուռնայրի քրիստոնեական գործունեության հետ, հասնում են մինչև 326 թ., իսկ քրիստոնեությունն էլ Աղվանքում հռչակվել է պետական կրոն, նախքան այդ թվականը, Ռ. Գեյուշևը ևս, այնուամենայնիվ, Ուռնայրին դարձնում է IV դ. առաջին քառորդի գործիչ և փաստորեն նրան վերագրում շուրջ 70 տարվա գահակալություն (տե՛ս Р. Г е ю ш е в. Նշվ. աշխ. էջ 29): Սակայն ճիշտ չեն այսպիսի ենթադրությունները, քանի որ, ինչպես տեսանք վերևում, մինչև դարի առաջին կեսի վերջերը (գուցե և ավելին) Աղվանքում թագավորում էին Վաչագան I-ը և Վաչե I-ը: Իրականությունն այն է, որ եղել է Ուռնայր անունով միայն մեկ թագավոր և նա էլ գահակալել է, կրկնում ենք, 4-րդ հարյուրամյակի երկրորդ կեսից սկսած:

Պարզելով, թե երբ է Ուռնայրը Աղվանքում անցել թագավորության գլուխ, դժվար չէ որոշել նաև քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանը, քանի որ, հասկանալի է, միայն գահ բարձրանալուց հետո նա կարող էր իրականացնել իր մեծ առաքելությունը: Պետք է ընդունել նաև, որ նա անմիջապես չէ, որ ձեռնամուխ է եղել երկրի հոգևոր վերափոխման խնդրին, մանավանդ որ նրա թագավորության սկիզբը ընթանում էր խռովահույզ իրադարձությունների բովով:

Ուռնայրի թագավորելով հայ-աղվանական հարաբերությունները մտնում են նոր փուլ: Այս շրջանում Ուռնայրը հանգես է գալիս որպես պարսից Շապուհ II արքայի դաշնակիցը և նրա քաղաքականության իրագործողը անդրկովկասյան երկրներում: Եվ օգտվելով 60-ական թվականներին Հայաստանում ստեղծված ծանր վիճակից նա, հավանաբար, Շապուհի սադրանքով, հարձակվում է հայոց վրա և նրանցից գրավում Ուտի-Առանձնակ, Շակաշեն, Գարդման, Կողթ գավառները և սրանց մերձակա շրջանները «և այլ որ շուրջն էին զնովաւ»[33]: Այնուհետև Ուռնայրին տեսնում ենք Ձիրավի ճակատամարտում Շապուհ II-ի կողքին, որի հետ էլ նա պարտվում է և նույնիսկ վիրավորվում սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի ձեռքով[34]:

Ձիրավի ճակատամարտից հետո էլ Աղվանքում քաղաքական իրավիճակը կայուն չէր: Այս անգամ Մուշեղ Մամիկոնյանն է հարձակվում նրա վրա և վերանվաճում Հայաստանից խլված տարածքները , դրանք միավորում մայր երկրի հետ և Կուր գետը կրկին սահման դարձնում երկու երկրների միջև, որն այդպիսին էր նաև մինչ այդ: Բուզանդը գրում է. «Առնէր պատերազմ (Մուշեղ Մամիկոնյանը – Հ. Ս.) ընդ երկիրն Աղուանից, հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բաղում դաւառս, զոր հաաեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք, գաւառք: Եւ զԿուր գետ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»[35]:

Մուշեղ Մամիկոնյանի կողմից Հայոց և Աղվանից միջև նախկին սահմանի վերականգնումից ու վերջինիս հպատակեցումից հետո, երկրում սկսվում է խաղաղության մի շրջան, որը քաղաքական կայունացման և սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացման հետ մեկտեղ բերում է նաև հասարակական մտքի զարթոնք ընդհանրապես և դրա ոլորտում քրիստոնեության մասնավորապես: Խաղաղ պայմաններում իրեն զգացնել է տալիս վերջինիս, որպես նոր հասարակարգում հարաբերությունների կարգավորման միջոցի, անհրաժեշտությունը ու պահանջ գնում այն հասցնել պետական կրոնի աստիճանի: Եվ Ուռնայրը այսքանից հետո գեռ նոր մեկնում է Հայաստան, մկրտվում այստեղ, ծանոթանում քրիստոնեության խորհուրդներին և վերադառնալով Աղվանք իր երկ-

---

[33] Բ ու զ ա ն դ, էջ 322:
[34] Խ ո ր ե ն ա ց ի, էջ 304, Բ ու զ ա ն դ, էջ 294-296, Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 30-31:
[35] Բ ու զ ա ն դ, էջ 320-322:

րում քրիստոնեությունը հռչակում պետական պաշտոնական կրոն: Դատելով վերոշարադրյալից, նա դա կարող էր անել միմիայն նկարագրված անցուդարձներից հետո՝ մոտ 70-ական թվականների կեսերին:

Իր այս առաքելական գործով աղվանից արքան նմանվում է Հայոց Տրդատ III թագավորին և հունաց կայսր Կոստանդիանոսին, որոնք նույնպես քրիստոնեությանը պաշտոնական բնույթ տվեցին իրենց երկրներում: Նշված իմաստով, նա, ամենայն իրավամբ, կարող է դասվել իր մեծ նախորդների կողքին և, հավանական է, գուցե և իրական, հենց այս հանգամանքն էլ ծնունդ է տվել նրան Դրատ Մեծի և Կոստանդիանոսի ժամանակակիցը լինելու վարկածին, որը, չնայած ժամանակավրեպությանը, ուսումնասիրողները ընդունել են որպես ճշմարտություն:

Այսպիսով, քրիստոնեությունն Աղվանքում պետական կրոն է հռչակվել IV դ. 70-ական թվականների կեսերին Ուռնայրի կողմից, որն իր մկրտությունն ստանալով Հայաստանում, այդուհետ Հայոց կաթողիկոսների կողմից Աղվանից հայրապետների ձեռնադրման կարգի սկիզբն է դնում[36]*:*

ФЕОДАЛЬНЫЕ ОТНОШЕНИЯ В АГВАНКЕ И ПРОВОЗГЛАШЕНИЕ ХРИСТИАНСТВА ГОСУДАРСТВЕННОЙ ОФИЦИАЛЬНОЙ РЕЛИГИЕЙ

ГЕНРИК СВАЗЯН

Р е з ю м е

Феодальные отношения в Агванке сформировались в IV в. Новый общественный строй требовал идеологии, которая укрепляла бы господствующую роль феодалов. Этой идеологией стало христианство. Царем Агванка Урнайром вскоре оно было объявлено государственной религией. В историографии нет единого мнения о дате принятия христианства в Агванке. Исследования показали, что в первой четверти IV в. страной правили цари: Вачаган I Храбрый и Вече I. Урнайр же последовал за ними в 60-е годы того же века. Исследователи, исходя из сообщений М. Каганкатваци, что Урнайр якобы был современником армянского царя Трдата III Великого, Григора Просветителя и римского царя Костандина, выдвинули разные даты христианизации страны. По нашему мнению это могло быть не раньше середины 70-х годов. Являясь первым агванским христианским царем, Урнайр уподобился армянскому царю Трдату III и Костандину, которые также явились первыми христианскими царями в своих странах. Это обстоятельство и послужило поводом, чтобы представить его современником своих армянского и римского предшественников. Таким образом, в Агванке христианство было провозглашено государственной религией в середине 70-х годов IV века царем Урнайром, который сам получил свое крещение в Армении и установил, что агванские католикосы рукополагались главами армянской церкви.

---

[36] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա գ ի, էջ 15:*